**ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

**ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻՆ**

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԲՏԱ նախարարության թվայնացման վարչության փորձագետի կողմից 2025 թվականի հունվարի 27-ից մարտի 28-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ**

1. "Ամպայինն առաջինը" քաղաքականության մշակման շրջանակներում միջազգային փորձի ուսումնասիրություն՝ տարբեր երկրների ընդունած քաղաքականությունների օրինակով: Գերատեսչությունների հետ հանդիպումների կազմակերպում՝ ամպային տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների, ռիսկերի քննարկման, ինչպես նաև կայքերը ամպ տեղափոխելու նպատակով: Համապատասխան կարգավորումների մշակման աշխատանքներ՝ ուղղված պետական կառավարման ոլորտում ամպային տեխնոլոգիաների ներդրմանը:

2. Կիբեռանվտանգության միջոցառումների կազմակերպման նպատակով **կիբեռանվտանգության հեքետոնի** նախապատրաստական աշխատանքների իրականացում, աշխատանքային խմբի ձևավորում, միջոցառման նպատակների ու խնդիրների սահմանում, ինչպես նաև կիբեռանվտանգության մարտահրավերների վերաբերյալ առաջադրանքների մշակում: Միջոցառման կազմակերպման նպատակով աշխատանքային քննարկումների կազմակերպում և համակարգում Ծրագրերի վարչության և ՀՏՀԳ գործընկերների միջև՝ նպաստելով համագործակցության բարելավմանը և միջոցառման կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

3. Միջազգային համագործակցության ամրապնդման շրջանակում մասնակցություն **UN ESCAP-ի** առցանց հանդիպումներին՝ ծանոթանալու միջազգային լավագույն փորձին և ներգրավվելու թվային կառավարման քաղաքականությունների մշակման գործընթացներին: Մասնակցություն "Asia-Pacific Information Superhighway (APIS) Working Group 2 Policy Brief on Government Technologies and Innovations" աշխատանքային խմբում՝ տարածաշրջանային թվայնացման ռազմավարությունները քննարկելու նպատակով: Մասնակցություն "Ad Hoc Working Group on digital solutions sharing in the Asia-Pacific region" աշխատանքային խմբում, որի շրջանակներում իրականացվել է անկախ իրագործելիության ուսումնասիրության վերլուծություն:

4. Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mullbery» համակարգով հանձնարարված աշխատանքների կատարում, որոնց թվում 7 ելից գրություն: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների հետադարձ կապի ապահովում: Ընթացիկ այլ հանձնարարականների կատարում, որոնք բխում են աշխատանքային պարտականություններից՝ համագործակցելով նախարարության համապատասխան վարչությունների հետ:

5. Թվայնացման վարչության ընդհանուր աշխատանքների համակարգում, հանդիպումների կազմակերպում այլ գերատեսչությունների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ, ակտիվ կապ նախարարության տարբեր վարչությունների, պետական կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ:

**ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

**ՓՈՐՁԱԳԵՏ՝** **ՀԵՂԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**28.03.2025թ.**

**Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ**

**ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ** **ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆ**

**28.03.2025թ.**